



**12.07.2013**

Այսօր <<Էրեբունի>> պատմահնագիտական արգելոց-թանգարանում տեղի ունեցավ <<Պատանի հնագետ>> դպրոցի 2013թ. ամառային դասընթացի շրջանավարտների հավաստագրերի հանձնման արարողությունը, որին ներկա էին նաև Էրեբունի ամրոցի միջնաբերդում պեղումներ իրականացնող ֆրանսիացի հնագետները:

Ողջունելով դպրոցի սաներին և նրանց ծնողներին՝ արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը կարևորեց հնագիտական ժառանգության պահպանությանն ուղղված ցանկացած կրթական նախաձեռնություն և ընդգծեց, արգելոց-թանգարանի հետևողականությունը դպրոցի աշխատանքների բարելավման ուղղությամբ:

Էրեբունիում պեղումներ իրականացնող ֆրանսիական արշավախմբի ղեկավար Ստեֆան Դեշամպը իր խոսքում նշեց, որ թեև դպրոցն ընդամենը 2 տարեկան է, սակայն ուսումնական պրոցեսի կազմակերպումը բավականին տպավորիչ է և հուսադրող: Նա նաև կատակեց՝ պատանի հնագետներին անվանելով <<կոլեգաներ>>: Նկատելով, որ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ Օ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ, Ստ. Դեշամպը հույս հայտնեց, որ այս նախաձեռնությունն իրապես նոր սերնդի շրջանում կնպաստի հնագետի մասնագիտության խրախուսմանը:

<<Պատանի հնագետ>> դպրոցի 2013թ. ամառային դասընթացի շրջանավարտները 14-ն էին, նրանցից ամենից կրտսերը՝ 6 տարեկան Արտուշ Խաչատրյանն այս տարի է հաճախելու դպրոց:

<<Պատանի հնագետ>> դպրոցը կրթական նախագիծ է, որն իրականացվում է <<Էրեբունի>> պատմահնագիտական արգելոց-թանգարանի կողմից: Դասընթացի հեղինակը թանգարանի աշխատակից, երիտասարդ գիտնական Միքայել Բադալյանն է: